ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

16 սեպտեմբերի 2019թ. թիվ 455

ՀԱՆՁՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019թ. հուլիսի 18-ի «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը նվազեցնելու և գույք ամրացնելու մասին» թիվ 918-Ա որոշման 7-րդ կետի՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր քաղաքի Բանակի փողոցի 8 հիվանդանոցային համալիր հասցեում գտնվող՝ 10,358.87 քառ. մետր ընդհանուր մակերեսով շենքից 2,153.88 քառ. մետր ընդհանուր մակերեսով մանկագինեկոլոգիական մասնաշենքը՝ 117,232,781 դրամ կադաստրային արժեքով և 80,219,080 դրամ հաշվեկշռային արժեքով, և 3.18186 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասից 0.33 հեկտար հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 14122018-06-0020 վկայական) (այսուհետ՝ անշարժ գույք) Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեին ամրացնելու նպատակով ստեղծել հանձնող հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մխիթարյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. սեպտեմբերի 16
ք. Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2019թ. սեպտեմբերի 16-ի
թիվ 455 կարգադրության

Կ Ա Զ Մ

Հանձնող հանձնաժողովի

Ա. Մխիթարյան	-	հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

Հանձնաժողովի անդամներ.

Լ. Վարդանյան	-	մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Ա.Սահակյան	-	մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Ա.Քառյան	-	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի առաջատար մասնագետ
Է. Հախվերդյան	-	մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման (մարզային հողային պետական տեսչության) բաժնի առաջատար մասնագետ
Վ. Մկրտչյան	-	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Գ.Գևորգյան	-	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի գլխավոր հաշվապահի պաշտոնակատար

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Invalid signature

X

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ